

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԶՐՈՒՅՑ

Մասնագետների լայն շրջանին մինչև օրս անծանոթ է, բնականաբար, նրա քննական հասցեից ու գիտական շրջանառությունից դուրս մնացած Արզլ Ճաֆարի և Ճեմիլայի գրույցի գոյության մասին հայտնում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձևագրացուցակը՝ նշելով սոսկ գրույցի խորագիրը և այն ամփոփող էջերը¹։ Այս տեղեկություններին ծանոթ էր և Ն. Ակինյանը, որը, անդրադառնալով Պղնձե քաղաքի, Մանկան և աղջկա, Ֆարման մանուկի և միջնադարյան այլ գրույցներին, ավելացնում է հետևյալը. «Այս գրույցներու շարքեն են նաև Աբդլ Ճաֆարի, Ֆիր Փաշույի պատմությունները, որոնք պահված են Տաղարաններու մեջ»², դարձյալ մատնացույց անելով Վիեննայի վերահիշյալ № 671 ձևագիրը։ Բանասերին անտարակույս ծանոթ չի եղել համաման որևէ այլ ձևագիր, այլապես նա դա ևս կնշեր, ինչպես նույն տեղում նշում է իրեն հայտնի՝ Վիեննայի, Հռոմի, Փարիզի, Վենետիկի, Հալեպի, Երուսաղեմի տասնյակ ձևագրեր ու տպագիրներ Պղնձե քաղաքի, Ֆարման մանուկի, Մանկան և աղջկա պատմությունների կապակցությամբ։ Նկատենք, որ միջնադարյան գրույց-պատմությունների ու նրանցում առկա կաճանների ուսումնասիրությամբ զբաղված անցյալի մեր բանասերներից և ոչ մեկը չի հիշատակում Աբդլ Ճաֆարի և Ճեմիլայի գրույցը։ Ա. Զոպանյանը ևս, խոսելով «վիպական սեռի» գրականության մասին, թեպետ նշում է, որ այդ կարգի հուշարձաններն արժանի են լայն ազդեցության և ուսումնասիրության և որ լայն կարգի գրվածքներուն մեջ կան դեռ բավական անտիպ մնացածներ. ինչ ալ բլլա իրենց արժեքը՝ պետք է բոլորն ալ հրատարակել»³, դարձյալ ակնարկ անգամ չի անում մեզ հետաքրքրող երկի մասին։

Դեռևս 1975 թ. մենք ծանոթացանք այդ գրույցի Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 671 ձևագրին՝ Մաշտոցի անվ. մատենադարանում ստացված մանրաժապավենի (707) միջոցով։ Այդ ձևագրից քաղված բանասիրական որոշ տեղեկություններ հրապարակեցինք «Հայ միջնադարյան կաճաններ» գրքում (Երևան, 1975), ավելացնելով, որ հետագայում անդրադառնալու ենք բնագրի ուսումնասիրությանն ու հրատարակությանը։

Արդ, գրույցի այլ գրչօրինակներ գտնելու մեր հետագա որոնումները պսակվեցին հաջողությամբ. ավելի ուշ մենք գտանք նաև երկրորդը՝ Պուսի Պալաթու Ս. հրեշտակապետաց եկեղեցու № 30 ձևագիրը (որի մանրաժապավենը ևս 504 համարի տակ Մաշտոցի անվ. Մատենադարան է մուտք գործել վերջին տարիներս), որը և հիմք հանդիսացավ հուշարձանի գիտահամամասնական բնագրի պատրաստման և ներկա հրապարակման համար։

1958 թ. Ն. Ակինյանի կողմից հայտնաբերված և «Հանդես ամսօրյայում» ներկայացված մի ձևագրից պարզ դարձավ, որ մասնավորապես Պղնձե քաղաքի, Մանկան և աղջկա, Ալեքսիանոս Լամբովոր աշքատի, Մարիա վաճառականի, Ֆարման մանուկի պատմությունները արաբերենից հայերեն են թարգմանվել դեռևս X դարում, Տալոց գավառում, հայազգի Դավիթ Կուրապաղատի պատվերով։ Ակինյանի ձևագրում այս գրույցները, իրենք, ունեն մի ընդհանուր հնդդույն վերատառություն՝ «Զրուց և խաղաղ առաջին թագաւորացն և իշխանացն, զոր թարգմանեցին Դավիթ Կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լիզվէ»⁴։ Այսու հաստատվում է նաև, որ Մանկան և աղջկան ու Պղնձե քաղաքի պատմությունների հիշյալ թարգմանությամբ, հայ ընթերցողի ծանոթությունը, ինչպես նաև տիպաբանական աղբյուրները վերահիշյալ գրույցների հետ։ Մասնավորապես

¹ Ցուցակ հայերեն ձևագրաց Մխիթարյան Մատենադարանին ի Վիեննա. հ. Բ, Վիեննա, 1963, էջ 162։

² Ն. Ակինյան. Զրույց Պղնձե քաղաքի.— «Հանդես ամսօրյա», 1958, 1—4, էջ 23։

³ Ա. Զոպանյան. Հայ էջեր. Փարիզ, 1912, էջ 115, 116։

⁴ Ն. Ակինյան. նշվ. աշխ.

ուշագրավ է Վիեննայի Միխիթարյան մատենադարանի № 671 ձեռագրի նրա խորագիրը՝ «Յառաջին թագաւորացն է. Աբղլ Ճաֆարին և Ճեմիլային պատմութիւն», որը, կարծում ենք, ոչ պատահականորեն, նույնությամբ կրկնում է Ակինյանի ձեռագրի վերոբերյալ խորագրի «առաջին թագաւորացն» դարձվածը, անհարկելով մի ընդհանուր նախնական սկզբնաղբյուր։ Այս խորագիրը փաստորեն նույն շարքի մեջ է զետեղում բոլոր այս զրույցները՝ իբրև գրական նույն միջավայրի և թարգմանական միաժամանակյա ընթացքի արտադրանք։ Ընդհանուր եզրերը հատկանշվում են մասնավորապես զրույցների բովանդակային և կառուցվածքային առանձնահատկություններով, կաֆաների առկայությամբ և նրանց պոետիկայով, բանահյուսական բազմակի աղբյուրներով, լեզվական առաջնությունը և այլն։ Միևնույն ժամանակ, անհերքելի է խնդրո առարկա զրույցի եզակի դիրքը միջնագրի մեր թարգմանական զրույցների մեջ առհասարակ, իր կենսական զորեղ շնչոտերով, աշխարհիկ անթաքույց ոգով, կաֆաների ուշագրավ դերով, պատումի դրամատիկ լարվածությամբ, սիրո բացահայտ և անվարան փառաբանումով, այն հիմքով առանձնակի տեղ է զբաղում զրուցաշարում։

Ջրույցն իր պատմության հենքով ու հորինվածքային էական գծերով հիշեցնում է մասնավորապես «Հազար ու մի գիշեր» ժողովածուի գունաղեղ և կենսահաստատ հեքիաթները։ Վերջիններիս հետ մեր կատարած նրա համեմատությունը ի հայտ է բերում բազմապիսի, հաճախ նույնությամբ հասնող տիպաբանական առնչություններ, որոնք թեպետ զրույցը բազմալար թելերով կապում են հեքիաթաշարին՝ իբրև գեղարվեստական-գաղափարական համակարգի բաղադրամաս, սակայն առկա վիճակով մատնացույց լին անում որևէ կոնկրետ, լիովին համարժեք արարական մի նախորինակ։ Ձի բացառվում, որ զրույցի հայերեն տարբերակը, ինչպես Մանկան և աղջիկ, Պղնձե քաղաքի հայերեն նախնական թարգմանությունները, ներկայացնի արարական նախորինակի սկզբնական՝ այսպես կոչված նախահաղարումեկյան վիճակը։ Ձենք անտեսում նաև հայ հեղինակների խմբագրական գործունեության հնարավոր հետքերը ևս, որ նման դեպքերում անխուսափելիորեն նորանոր շերտերով ծածկում են երկի կորիզը։

Հարկ է նշել, որ արաբական նախորինակի որոշ գծեր (հատկապես հատուկ անունները) պահպանած այս զրույցը միջնագրի հայկականացված հուշարձաններից է՝ քրիստոնեացման և տեղայնացման շոշափելի դրսևորումներով։ Հետաքրքիր է մեր մատենագրության մեջ վկայակոչված «Վասկերտ» տեղանվան, ինչպես նաև բուն հայկական բանաստեղծական չափով՝ հայրենային տաղաչափությամբ գրված կաֆաների և, մասնավորապես, «Յառաջին էք հեռաւոր, զինչ յուսինն ու ամպն ի դիմաց» սկզբածքով երգի առկայությունը զրույցում։ Երբ, ինչպես պարզվում է, սիրո հանրահայտ հայրեններից մեկի՝ մի նորահայտ տարբերակն է, որը մասնակիորեն վերաձևվել է թերևս զրույցի բովանդակության թելադրանքով։ Ջրույցի բոլոր 14 կաֆաներն էլ հենց պոետիկական ընդհանուր հատկանիշներով համընթաց են գնում թարգմանական նման երկերում առկա ընդմիջող երգերին։ Նկատենք սակայն, որ միջնագրի գեղարվեստական արձակ ներմուծված շուրջ 400 կաֆաների մեր կազմած ցանկում վերջիններս առանձնանում են բանաստեղծական խոսքի իրենց ինքնուրույնացման աստիճանով ու ընդհանրացման չափով և արձակ բնագրից առանձնացված ընկալվում են իբրև ինքնուրույն հայրեններ և ոչ իբրև սոսկ բնագրի հարասություն՝ բացատրող և մեկնող չափածո խոսք։ Այդ կաֆաների մի մասը՝ իբրև սիրո երգեր, նորություն է կաֆաների ողջ հարստության մեջ և ընդլայնում է նրա թեմատիկ լոգոգրությունների ոլորտը⁵։

Կաֆաների նորանշան դերը Աբղլ Ճաֆարի և Ճեմիլայի զրույցում պայմանավորված է նաև նրանով, որ դրանք, ըստ էության, զրույցի սյուժետային հենքի կրողներից են, որը և մատնանշում է կաֆաների կիրառական յուրահատկության նաև բանահյուսական ակունքը՝ հիշեցնելով ժողովրդական հեքիաթներում և զրույցներում պատահող երգերը, որոնք ես, ինչպես այս դեպքում, հիմնականում չափածո երկխոսություններ են։ Ջրույցի արաբական նախորինակի հետագա որոնումները թերևս ի հայտ կբերեն նաև նրանում առկա թարգմանական որոշ կաֆաներ։

⁵ Հմմտ. Ա. Զոպանյան. Հայրեններու բուրաստանը. Փարիզ, 1950, էջ 214։ Մ. Արեգյան. Գուսանական ժողովրդական տաղեր. Երևան, 1940, էջ 51։

⁶ Նման սակավաթիվ կաֆաներ տե՛ս նաև Վիեննայի № 671 ձեռագրում ամփոփված «Պատմություն աղբաւ թագաւորին» զրույցում (էջ 143ա), հմմտ.՝ Մաշտոցի անվ.՝ Մատենադարան, ձև. № 1682, էջ 21ա։ Հ. Սիմոնյան. Հայ միջնագրային կաֆաներ. Երևան, 1975, էջ 260, 278։

ինչպես և զրույցի հետ ստեղծագործական աղբյուրներ ունեցած հայ կաֆայադիր հեղինակների անունները:

Զրույցի լեզուն ժամանակի խոսակցական լեզուն է՝ դրարարի, միջին հայերենի և զավառարարառի ինքնատիպ համադրությամբ, որ բնութագրական է այսօրինակ ժողովրդականացած հուշարձանների համար:

Զրույցի մեզ հայտնի երկու օրինակներն էլ նույն խմբագրությանն են պատկանում. տիպարանորեն և կառուցվածքային հատկանիշներով նույնական են: Երկու ձևագրերում էլ կաֆաներո հանդիպակաց լուսանցքներում ունեն գկֆա (կաֆայ) նշումը: Վիեննայի ձևագրի բնագիրն արձակ մասերին կից ունի լուսանցային ռգրա (զրույց) նշումը: Տարբերակման համար երկուսում էլ կաֆաների թանաքն այլ է:

Նույն հրապարակման հիմքում ընկած Պոլսի Պալաթու Ս. հրեշտակապետաց եկեղեցու № 30 ձևագրերը ներկայացնում ենք A պայմանական նշանով: Տողատակային համեմատությունների համար օգտագործված է B տառով նշված Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 671 ձևագրերը: Տողատակում տրվում են B-ի տեքստային էական տարբերությունները: A-ում առկա էական սխալները ներկայացվում են սրբագրված տեքստով, յուրաքանչյուր դեպքում տողատակում նշելով նրանց իրական տեքստը, իսկ մեր վերականգնումները առնվում են ուղիղ փակագծերի մեջ: Զանց է առնված հավելյալ ռյա, ինչպես և բառակազմիչ արժեք չունեցող ռյա: Հնչյունը՝ չհաշված լափածո խոսքում՝ կաֆաներում, կիրառվող վանկարար ռյա-ն: Որոշ հնչյունների զուգաձև կիրառություններ բերված են միօրինակության՝ ըստ ժամանակի ուղղագրական կանոնների:

Արզլաֆար, Արզլ ճաֆար, Արզլաֆէր և Ճէմիլա, Զեմիլա ձևերից նախապատվությունը տրված է ձևագրերում գերակշռող առաջին ձևերին: Հետեւի ենք կետագրության արդի կանոններին, բացել ենք պատվո նշանները, տառերի թվային արժեքները փոխարինել թվային համարժեքով:

Հ. Ա. ՍՈՄՈՆՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԿԱՅԱՐ ՄԱՆԿԱՆ
ԵՎ ԶԷՄԻԼԱՅ ԱՂԶԿԱՆ, ՈՐԲ ԱՌԻՆ ԶԻՐԱՐ:

Նղև ի ժամանակի մի ի Պաղտատ² քաղաքն խիստ մեծ և անյաղթու³ թագաւոր մի, և որդի ոչ եղև նմա⁴: Եվ բաղում անգամ խնդրէր յաստուծոյ⁵ ուխտիւք և բազում տուրս և ողորմութիւնս⁶ բաշխէր աղքատաց և կարօտելոց՝ ո՛րք է աղբիւրք նոցին ողորմի աստուած⁷ և տացէ նմա զաւակ: Եւ կանգնեալ՝ չաղթս՝ ասէր կաֆայ:

— Խնդրեմ ես ի քէն, աստուած,
Թագաւոր երկնի՝ և երկրի՝,
Որ դու ծառայիդ լսես
և տաս ինձ զաւակ մի բարի,
Որ քո ողորմութենովդ
աթոռիս ժառանգ նա լինի:
Զի մահկանացու եմ ես,
յիշատակըս մեր չկորնչի:

1 Բ Յառաջին թագաւորացն է. Արզլաֆարին և Ճեմիլային պատմութիւն փխ խորագրի

2 Ե Եւ եղև ի ժամանակի Պաղտատ փխ եղև... Պաղտատ

3 Ե Սեծան յաղթող փխ մեծ և անյաղթու

4 Ե ունէր փխ եղև նմա

5 Ե աղաչեաց զաստուած փխ խնդրէր յաստուծոյ

6 Ե ինչս փխ տուրս և ողորմութիւնս

7 Բ Ողորմի նմա փխ աղբիւրք... աստուած

8 Ե կանգնեալ յաղթս—Զիք

Եւ բազում ողորմ խնդրէր յաստուծոյ, և աստուած երես նմա զաւակ մի արու⁹ խիստ գեղեցիկ և շնորհալի ամենայն իրօք, որ¹⁰ և դրին մանկանն անունն Աբղլ Ճաֆար: Եւ¹¹ իբրեւ եօթն տարոյ եղև, ետուն զնա յուսումն առ իմաստասէրս, որ և¹² ուսաւ զամենայն իմաստութիւնն և զհանճար¹³: Եւ յորժամ եղև տասնհինգ տարոյ, սկսաւ հեծնուլ ի ձի¹⁴ և խաղալր առաջի հօր, իւր¹⁵ նմանակ ինքեան ձիավարժ մանկանց հետ: Եւ տեսեալ հայրն՝ ուրախաւնայր և գոհանայր զաստուծոյ:

Եւ յաւուր միում զրուց եղև ի¹⁶ մէջ ժողովոյ իշխանաց առաջի թագաւորին, թէ յայս նիշ¹⁷ տեղի թագաւորի մի դուստր մի կա, որ իւր նման¹⁸ գեղեցիկ այլ չէ եղեալ յաշխարհս: Եւ ի հօրէն զաղտ ասացին Աբղլ Ճաֆարին՝ վասն չարկամութեան: Եւ Աբղլ Ճաֆարն ցանկացաւ ի մօտին և ասէր. «Ո՞նց կարեմ¹⁹ հնար գտնուլ, որ ես տեսանիցեմ զայն աղջիկն»: Եւ օր մի փոխեց զկերպն և փախեալ գաղտ²⁰ ի հօրէն, վասն զի հայրն²¹ չկամենայր, որ օր յիւրմէն ի զատկենայր Ճաֆարն: Եւ էառ ընդ իւր շատ դեկան և զնաց մենիկակ²² ի հետ ճամփորդի բազում օրեր և բազում աշխատութեամբ եհաս յայն քաղաքն, ուր այն թագաւորի աղջիկն էր, զի երկու ամսոյ ճամփայ²³ էր մինչև յայն քաղաքն: Եւ եմուտ ի քաղաքն²⁴ ի կերպս աղքատ մարդոյ:

Երբ²⁵ Ճաֆարին հայրն իմացաւ զկորուստ որդոյն իւրոյ՝ խելաթափ եղեալ կսկծանօք վայէր զինքն և աղաչէր, թէ. «Զի՞նչ եղև սիրուն որդին իմ. մի՞թէ նախանձոտ արք սպանեցին, և կամ ուրանօ՞ր գնաց և զի՞նչ եղև»: Ինքն ելաւ բազում հեծելով, ի շորս դիհն ընդ իշխանութեամբ իւրով որոնել սկսաւ և այլ բազում գունդս ի կողմս-կողմս որոնողս ղրկեց, որ և զնացին, շատ շուրջ եկան, ի գաղտնի և յալանի հարցուցին և ոչ գտին և ոչ բնաւ խապար. մի կարացին առնուլ, որ և մեծաւ տրտմութեամբ դարձաւ հայրն Ճաֆարին ի տուն իւր: Իսկ²⁶ Ճաֆարն, յորժամ եմուտ ի քաղաքն, ուր աղջիկն էր, շուրջ եկեալ քանի մի օր ի քաղաքն և իբրեւ տեղեկացաւ զաղջկան բնակութեան տեղն, յաւուր միում զնաց ի դարպասի դուռն, ուր աղջիկն էր: Եւ այն դարպասն էր ի ջրէն հեռու²⁷, և կազմուած դարպասին այն էր բարձր և լայնանիստ, և ոսկի և արծաթի դարաճնեքով յօրինեալ: Եւ աղջիկն ի ներսն: Կու կենայր, որ մարդոք չերևէր: Երբ տեսին²⁸ զՃաֆարն՝ հարցան, թէ.

9 B արու—ՉԻՔ

10 B և անուն դրին նմա փո որ և... անունն

11 B Եւ իբրեւ... իմաստասէրս—ՉԻՔ

12 B աճեցաւ և փո որ և

13 B և զհանճար—ՉԻՔ

14 B ի ձի հեծնուր փո սկսաւ... ձի

15 B աննմանակ և հայրն ուրախանայր փո նմանակ... զաստուծոյ.

16 B ի մէջ... թագաւորին—ՉԻՔ

17 B այս տեղ փո այս նիշ

18 B նմանակ

19 B կարեմ—ՉԻՔ

20 B զաղտ—ՉԻՔ

21 B հայրն—ՉԻՔ

22 B մենակ

23 B աշխատութեամբ երկու աւուր ճանապարհ փո և բազում... յայն քաղաքն

24 B Եւ զնաց այն քաղաքն, որ այն աղքատ թագաւորն էր փո Եւ եմուտ ի քաղաքն

25 B Երբ հայրն իմացաւ, որ որդին կորաւ և մարդ չգիտաց, թէ կորաւ, թէ սպանեցին և կամ զի՞նչ եղև, ելաւ հեծելով և շատ քաղաք մարդ ղրկեց և հարցաւ՝ չգտաւ զՃաֆարն փո. Երբ... ի տուն իւր:

26 B Եւ Ճաֆարն զնաց ի յայն աղջկան դարպասին դուռն օր մի փո իսկ... դուռն ուր աղջիկն էր:

27 B հեռու և բարձր, կազմած ոսկի և արծաթէ տարաճանով փո, հեռու... յօրինեալ.

28 B Երբ տեսին—ՉԻՔ

— Խնշ մարդ ես:

Ասաց Ճաֆարն, թէ.

— Ղարիպ հմ²⁹ և աղքատ:

Եւ նոքա ասեն ցնա.

— Առ քեզ օրն երկու դրամ և էշ³⁰ մի և ջուր կրէ իշովն աստ³¹ վասն ձիա-
նուն:

Եւ ասաց.

— Թող լինի՛, դի ես այլ կուգեմ, որ ապրիմ:

Եւ պառաւն մի կայր վերակացու աղջկանն: Գնացին, ասացին պառաւն,
և պառաւն ասաց թագաւորին: Թագաւորն ձենեց զՃաֆարն և տեսաւ գեղեցիկ
մանուկ մի մերկ³² և խղճաց, թէ՛ թող երթայ, կրէ զջուրն և ապրի: Եւ Ճաֆարն
խնդալով կրէր զջուրն³³ յամէն օր և ասէր կաֆայ մինչև երկու տարի: Եւ պա-
ռաւն շի թողոյր, որ Ճաֆարն³⁴ տեսանէր զաղջիկն և կամ աղջիկն՝ զՃաֆարն:
Եւ անուն աղջկան էր Ծէմիլա: Մի օր ասէ աղջիկն ի պառաւն վասն Ճաֆարին,
թէ. «Դա այդպէս³⁵ գեղեցիկ և խելօք կտրիճ է. մնամ, թէ մեծ մարդոյ տրդի է
սա»: Եւ մինչդեռ յայս գրուցս էին, եկաւ Ճաֆարն ի ջրէն: Ասաց պառաւն, թէ.
«Ճաֆար, ասա կաֆայ մի յիշող վրայ: Եւ ասաց Ճաֆարն կաֆայ դայս.

— Զինչ իսկի ծառայ կենայ,

որ նա զիւր տերըն ծառայէ.

Ինքն զամէնն այնոր մրնայ,

որ պարտնն զինքն վճարէ.

Իմ էշս³⁶ ի վազեց գերի,

որ պառաւ մը զինք կու խոցէ.

Թէ չէ սա յօժար կամօք

կու դատի ու ջուր կու կըրէ:

Եւ³⁷ դարձաւ դէպի պառաւն, ասաց կաֆայ.

— Զինչ կա Եւայի ծնունդ,

ողորմած գէմ յիւրմէ լսել.

Դու յէ՞ր անողորմ եղար,

որ սրտիկդ իշուս չի խղճել.

Ո՞վ իսկի³⁸ հանց արմացք լսել³⁹,

որ ջրկիրն ի ծարուն մեռել

Յամէն օր տաս ջուր կըրել

ու ծարուած⁴⁰ ես զինք դու պահել:

Զայս ասաց Ճաֆարն և գնաց ի ջուրն: Եւ Ծէմիլան ի սէր շարժեցաւ և
հարցուկ լինէր պառաւն, թէ. «Այդ ինչպէ՞ս մանուկ է, յուսկի՞ց է և այդպիսի
բարով կտրիճ է և ծառայութիւն կանէ: Ասա իմ հօրն, որ զինքն չի հանէ ի
մենէն: Եւ մինչ յայս գրուցս էին՝ եկն Ճաֆարն ի ջրոյն: Ասէ աղջիկն ի պա-
ռաւն թէ. «Ասա՛, որ կաֆայ ասէ»: Եւ ասաց Ճաֆարն.

29 B Ղարիպ հմ, օտար

30 B եզ փե էշ

31 B իշովն աստ—Չիք

32 B մանուկ էր փե մանուկ մի մերկ

33 B զջուրն—Չիք

34 B տեսանէր աղջիկն զՃաֆարն փե Ճաֆարն... զՃաֆարն

35 B այդպէս փե Դա այդպէս

36 B եզս փե էշս

37 B Դարձաւ ի պառաւն փե Եւ... կաֆայ

38 B է փե իսկի

39 B տեսել փե լսել

40 B ծարաւ փե ծարուած

— Ճըրագ եմ ի յանց եկեր⁴¹,
 թէ կու տաս ձէթ այս ճըրագիս.
 Խաւար եմ ի լոյս եկեր,
 լոյս արա հետմ այս ծառայիս.
 Կարօտ եմ ի քո տեսուդ,
 թէ խօսիս հեզիկ մըն ի յիս.
 Թէ չէ այս գերի ծառայս
 կայ ու լայ միշտ ըզքեղ և ըզիս:

Դարձեալ ասէ Ճաֆարն կաֆայ⁴².

— Չունիմ խորհուրդ յիմ սըրտիս,
 քան զերկար դատիլն անդադար
 Ու զիմ վարպետին ըզցաւն,
 որ հիւանդ կեցաւ նա երկար.
 Պառա՛ւ, ի քո շատ խոցուդ
 ամենիդ ունիս դու վրճար⁴³.
 Յէ՛ր չես ի թողուր զիմ կեանքս,
 որ ի յիս խօսի⁴⁴ մխիթար:

Ասաց Ճէմիլան պառուուն. «Ա՛ռ քեզ հարիւր դեկան և թող⁴⁵ դայդ կտրիճի,
 որ խօսիմ յինքն»: Ասաց այն շուն պառաւն, թէ. «Այդոր ճար չկայ»: Լսեց Ճա-
 ֆարն և ասաց կաֆայ.

— Պառա՛ւ, մէկ նայէ յաստուած
 ու արա հոգւոյդ դու բարի.
 Եւ առ, զինչ որ տայ⁴⁶ դա քեզ
 ու⁴⁷ ես այլ ի հետ քեզ գերի.
 Լուկ թող զիմ հոգւոյս հոգին,
 որ բերնովն ի ⁴⁸ յիս նա խօսի,
 Զի մեղք է ու շատ լալիք.
 Խիստ դատիլն ու կենալն անօթի:

Դարձեալ և ի Ճէմիլայն ասաց կաֆայ.

— Խօսէ՛, թէ խօսիլ կարես⁴⁹,
 մի՛ դնէր պառուուն դու մրտիկ.
 Պառաւդ ի չոր փայտ նման
 ի կըրակ⁵⁰ դընեն երելիք.
 Ունիմ⁵¹ խորհուրդ յիմ սրտիս,
 կու այրիմ դիմաց քեզիկիկ.

41 A եկել (ուղղումն ըստ B-ի)

42 B կաֆայ—Չի՛

43 B զճար փե վրճար

44 B հայի փե խօսի

45 B թողուր խօսիմ այդ կտրիճիդ հետ փե թող... յինքն

46 B դա քեզ կուտայ փե տայ դայ քեզ

47 B ես այլ հետ փե ու... ի հետ

48 B նա յիս փե ի յիս նա

49 B կամիս փե կարես

50 B դնեն ի կրակն փե ի կրակ դընեն

51 B Ունիմ շատ խորհուրդ փե Ունիմ խորհուրդ յիմ

Իմ մէջլս⁵² ի վաղէց ի վեր
զքեզ սիրեց⁵³ և ոչ հիմիկիկ:

Ասաց ճէմիլան ի պառան, թէ. «Թո՛ղ, որ էրթամ խօսիմ, թէ չէ իմ հօրն սպաննել տամ զքեզ և քեզ ի՞նչ շահ է»: Ասաց պառավն, թէ. «Դո՛ւ գիտես»: Յայնժամ երեկ ճէմիլան ի տարաճան, որ ճաֆարն տեսաւ և թալցաւ, և պառան շուր ցանեց⁵⁴ յերեսն և ի վեր ի կալ: Ասաց ճէմիլան ի ճաֆարն, թէ. «Ասա՛ անուշ⁵⁵ կաֆայ մի»:

— Այսօր իմ ամէն շիւարս
ի յիսնէ գնաց, հեռացաւ.
Վասն⁵⁵ որ կեանք ու մահ կու տար,
փ բերնովն ի յիս խօսեցաւ.
Ջինչ որ ինձ երեկ գալիք
ու շիւարս ի յիսնէ տարաւ.
Երեկ լոյս մթան աշիշ
և ինձ նոր արև ծայթեցաւ⁵⁷:

Դարձաւ և ճէմիլան ասաց կաֆայ զայս⁵⁸.

— Դու ես հոգի իմ հոգւոյս,
որ հանշաքմ հետ ինձ դատեցար.
Հոգի՛, ի քո շատ սիրուդ
ես կեցայ ի շատ նեղ ու շար⁵⁹.
Թողունք մենք զամէնն ի բաց,
երբ ես քեզ ու դու փնձ եղար.
Ջոր յերկրի կենդանի կենանք
թող վա[յ]ենք երկուքս ընդ յիրար:

Դարձեալ ճաֆարն ասաց կաֆայ⁶⁰.

— Ծարակ շունէի բընաւ,
քո տեսուդ լուկ դժնիկ եղայ.
Ու⁶¹ զինչ ինձի շար երեկ՝
մոռացայ, երբ ըզքեզ տեսայ.
Հասայ իմ ամէն կամացս⁶²,
ես ի յիմ⁶³ մուրատէն դուրացայ.
Երեկ վըճարիմ շարիս,
զի անանց կեանքն մօտեցայ⁶⁴:

52 B Իմ եղս փե Իմ մէջլս (երկու ձեռագրում էլ աղավաղված է. պետք է լինի՝ Իմ մեղս)

53 B լսել փե սիրեց

54 B ձգեց փե ցանեց

55 B անուշ—ջիթ

56 B Այն փե վասն

57 B Իմ ամէն գիծարս դիւրացաւ փե տողի

58 B Եւ ասէ՝ ճէմիլան զայս կաֆայ փե տողի

59 B Նեղութիւն փե նեղ ու շար

60 B Եւ ասէ՝ ճաֆար փե տողի

61 B Ու զինչ եկեր փե տողի

62 B Իրաց փե կամացս

63 B Ու ես իմ մուրատս փե ես ի յիմ մուրատէն

64 B Ջի անցեալ կեանքն մոռացայ փե տողի

Դարձաւ և ճէմիլան ասաց կաֆայ զայս⁶⁵.

— Յառաջն էաք հեռաւոր⁶⁶,
զինչ լուսինն ու ամպն ի դիմաց.
Եկայք, մօտեցանք հիմիկ,
զինչ գձուկն ու զջուրն ի հիտրաց,
Հոգի՛, թէ ինձ⁶⁷ կեանք կուզես,
մի՛ պահէր զաշերս իմ ի լաց.
Թէ չէ յետ սակաւ աւուրս
գաս, գտնուս ըզիս դու մեռած:

Ասաց ճէմիլան ճաֆարին.

— Ո՞վ ես դու կամ յուստի՞ց ես⁶⁸:

Ասաց ճաֆարն.

— Ես Պաղտատայ ամիրին որդին եմ, ո՞նց գամ առ քեզ:

Ասաց ճէմիլան.

— Գնա՛ դու շուկան և եղիր դերձակ և հանց դումաշ գնէ՞⁶⁹, որ այլ մարդու առջև չի գտնվի, և նիստ, թէ՛ կապայ կու ձևեմ: Եւ ես զծառայքս ղրկեմ, թէ՛ գնացէք, ազեկ դերձակ մը բերէք, որ գայ ինձ հալաւ կարէ: Գան զքեզ տեսնուն, որ յայլ մարդու առջև այլ հանց աղէկ դումաշ չկենայ՝ գիտենան, թէ վարպետ ես դու, առնուն⁷⁰ զքեզ, բերեն յիս ի մօտ:

Գնաց ճաֆարն ի շուկան և գնեց կտաւ մի վաթսուն դեկան և նստաւ ի շուկան և սուտ՝ «Պիտի»⁷¹ ձևեմ զայս կումաշս» ասելով, ողջաձև դարձմրցուկ կանէր: Եւ ճէմիլան ղրկեց զծառայն, թէ. «Գնա՛, աղէկ դերձակ մի բեր, որ գայ, ինձ հալաւ կարէ»⁷²: Գնաց ծառայն [ի շուկան]⁷³, ի շուրջ եկավ և տեսաւ, որ հանց կտաւ յայլ մարդոյ առջև չկայր և գիտաց, թէ աղէկ վարպետ է, բռնեց, թէ՛ «Արե՛կ»⁷⁴, մեր խաթունին հալաւ կտրէ: Ասաց ճաֆարն, թէ «Ես ղարիպ մարդ եմ, մէկ մի այլ տարէք և ոչ զիս»: Եւ յիւր մտին⁷⁵ ասէր, թէ՛ «Տարէք զյօժարս ի կամակն»: Տարան զճաֆարն բռնութեամբ մօտ ի ճէմիլան, և կեցաւ անդ բազում օրեր, և անուշանային երկուքն ի միասին: Նա գնաց այն շուն պառաւն⁷⁶ և ասաց հօրն, թէ. «Հոն կա զքո դուստրն և զջրկիրն՝ ի մէկտեղ բռնեցի: Նա երես թագաւորն զճաֆարն ի դահիճն, թէ՛ սպաննեցէ՛ք: Նա ասաց զճաֆարն դահիճացն, թէ. «Մի՛ սպաննէք զիս, ես Պաղտատայ ամիրին որդին եմ և մօրս մէկն եմ. լինայ⁷⁷ օր, որ ես շատ բարութիւն հասուցանեմ քեզ»: Ասացին դահիճքն, թէ. «Երդնուս, որ յայս քաղաքս»⁷⁸ այլ չի կենաս՝ նա կու թողումք զքեզ: Թէ չէ ի հոս որ կենաս, կիմանայ⁷⁹ թագաւորն՝ զքեզ այլ կու սպաննէ, զմեզ այլ: Եւ նա երդում արար, որ ի բաց թողին:

65 B Եւ ասաց ճէմիլան կաֆա փ տողի

66 B հեռաւոր էաք փ էաք հեռաւոր

67 B կեանք կուզէ փ ինձ կեանք կուզես

68 B դու ո՞վ ես փ տողի

69 B դնէ թէ կու կարեմ

70 B գան փ առնուն

71 B անցմնցուկ փ Պիտի... դարձմրցուկ

72 B ձեւէ փ կարէ

73 Լրացումն ըստ B-ի

74 Եկո փ Արեկ

75 B միտքն փ մտին

76 B պառաւն թէ թագաւոր փ պառաւն... հօրն թէ

77 B լինայ... հասուցանեմ քեզ—Չի՞ք

78 B աշխարհս և ի քաղաքս չկենաս փ քաղաքս այլ չի կենաս

79 B որ ես տեսնում նա թագաւորն սպանանէ զքեզ և զմեզ փ կիմանայ... թողին

Եւ⁸⁰ իբրև ազատեցաւ Ճաֆարն, ելաւ ի քաղքէն դուրս լալով և գնաց ի յաղաք մի, որ կոչէր անունն Վասկեր[տ]⁸¹, նստաւ ի շուկան՝ սրտնեղեալ մինչև յիրկունս։ Նա մէկ մի չհարցաւ, թէ՛ ուստի՞ց հաս։ Եւ միահեռ⁸² հառաչէր, և լերդն արիւն բերէր ի վեր և ասէր. «Աւա՛ղ, հազար վայ զօտարն ի դարկութիւնս»։ Եւ ասէր կաֆայ զայս։

— Այլ ողորմ չէի տեսել,
գինչ զարիպն ի մէջ շուկային.
Ամէն մարդ իւր տունն երթայ,
նա մնաց զարիպն ի տեղին.
Զքարիկն իւր⁸³ սրնարք անէր
ու զաւաղն անէր⁸⁴ անկողին.
Հետ զգլխարկն ի վեր կալնէ⁸⁵,
լուկ⁸⁶ հառչէր դէմ արարողին։

Ասաց մէկմ, թէ. «Եղբա՛յր, ա՛ռ քեզ յամիսն մի դեկան և կէս, արեկ զմեր⁸⁷ ալգին պահէ»։ Եւ ասաց Ճաֆարն. «Քո հրամանքն է»։ Ոմանք ասէին. «Աւա՛ղ, թէ ինչ ափսոս կտրի՞ճ է, երթայ յոչինչ տեղ մեռնի մի դեկանի համար»։ Լսեց Ճաֆարն և ասաց. «Եղբա՛րք, յէ՛ր մեռնիմ»։ Նոքա ասացին, թէ էգին[ի] հարամկուտ⁸⁸ տեղ է, գինչ էգեպան, որ կու տանի՝ զամէնն կու սպաննեն։ Ասաց Ճաֆարն. «Ինքն գիտէ, շատ գեշ եմ քաշել և զայն այլ նոցա կարգն կու համրեմ⁸⁹»։ Եւ էառ երիս դահեկան՝ երկու ամսուան վարձ, և գնաց գնեց ուտելու և խմելու գինի, մոմեր և այլ բաներ⁹⁰ և գնաց յէգին։ Երբ իրիկվեց, եկին հարամիքն և կանչեցին, թէ՛ «Պաղչապա՛ն, ո՞ւր հաս»։ Նա գնաց Ճաֆարն և երաց դուռն պաղչալին և ասէ. «Հրամայեցէ՛ք, իմ աղուոր պարոնայք», և տարաւ, նստոյց գնոսա, երբ ուտելու և խմելու, կերցուց և խմցուց և վառեց մոմեր։ Նա հարամիքն մէկ ի մէկ նայեցան և ասեն. «Աստուած գիտէ, թէ քին աղուոր տղայ է սա և մեզ ծառայութիւն կանէ»։ Խիստ ընդունեցան զնա և ընկեր մի այլ զնա հաշուեցան և յիրեն⁹¹ իրացն բաժին մի այլ նորա տուին, թէ՛ «Մեր ասպնջական[ի] հս դուռ և գիրենցն այլ ի նա պահ տուին և իրենք գնացին ի հարամկութիւն⁹²։ Եւ դահիճնին, յորժամ⁹³ լսեցին, թէ Պաղտատայ ամիրին որդին է, եթող⁹⁴ տուին զՃաֆարն, յէտ որոյ ոչ սակաւ աւուրց մարդ զրկեցին ի Ճաֆարին հօրն, թէ. «Զքո որդին մեր թագաւորն ի մեզ երեստ, թէ՛ տարէ՛ք, սպաննեցէ՛ք»։ Նա մեք շսպանեցաք, ի բաց թողաք, եկա՛ւ առ քեզ, թէ՛ չէ»։ Յորժամ լսեց հայրն Ճաֆարին՝ խանդաղատեցաւ սիրտն, և գալարեցաւ աղիքն, և բարկութեամբ լցեալ ժողովեց բազում հեծել և պատուիրեց, թէ. «Գնացէ՛ք, բերէ՛ք զայն թագաւորն, որ զմիսն ուտեմ»։ Եւ⁹⁵ այս բան[ն] յայտնի եղև աղչկան հօրն, և յորժամ ստոյգն իմացաւ, ժողովեց զիւր տունն և

80 B Եւ ելաւ Ճաֆարն ի քաղքէն ֆե Եւ... քաղքէն դուրս

81 Լրացումն ըստ B-ի

82 A միահեռ (ուղղումն ըստ B-ի)

83 B Զսալուկըն ֆե Զքարիկն իւր

84 B իրեն ֆե անէր

85 B Զգլխարկն ի վերայ գնէր ֆե տեղի

86 B ու ֆե. լուկ

87 A զիմ ֆե զմեր (ուղղումն ըստ B-ի)

88 B հարամկուտ

89 B նոցա կարգն կու համրեմ—ՉԻՔ

90 B և այլ բաներ—ՉԻՔ

91 B իրենք իրենց ֆե յիրեն

92 B հարամկութիւն

93 B երբ ֆե յորժամ

94 B եթող... աւուրց—ՉԻՔ

95 B Յայնժամ լսեց աղչկան հայրն ֆե Եւ... իմացաւ

զտեղն, զոգական ու զմալն և զտանն⁹⁶ քուլֆաթն, և փախչէր: Եւ զձէմիլա աղ-
ջիկն⁹⁷ իւր և զպառաւ մէկ⁹⁸-մէկ սնդուկ եղեալ, իբրեւ զբեռ ի մէկ ուղտ էր
բարձեր: Եւ զօրքն ճաֆարին հօրն դնացին, աւիրեցին զաշխարհն զայն [թա-
գաւորին]⁹⁹: Եւ թագաւորն ի փախչելն միայն էր իւր ընտանեօքն, հանդիպե-
ցաւ հարամոցն, և թալանեցին և ձգեցին զոգական: Եւ փախեալ¹⁰⁰ թագաւորն
միայն, և առին զմալն և զխազնան և¹⁰¹ փայ ու բաժին արարին և յորժամ առաջ
բերին այն բեռն, որ երկու սնդուկն էր, և ասեն, թէ. «Այս մէկ բեռս զինչ որ
եղնէ՝ յանուն պաղչապանին լինի, չենք բանար, անոր կու տանինք: Եւ հանդի-
սեցաւ այն բեռն, որ ձէմիլան և պառաւ էր ի¹⁰² մէջ սնդկից: Եւ առեալ¹⁰³
զբեռինսն՝ երթային զճանապարհս իւրեանց: Եւ ի նոցա տանելն պատահե-
ցան¹⁰⁴ ի վերայ հեծելք ճաֆարի հօրն և սպաննին զհարամիքն և առին զինչ-
քն¹⁰⁵ և գտան զճաֆարն և շատ լացին զնորա փորձանքն և բացին զսնդրկ-
նին¹⁰⁶: Եւ երան ի մէկ սնդկէն ձեմիլան, և ճաֆարն թուցաւ-անկաւ¹⁰⁷, և ջուր
ցանեցին¹⁰⁸ յերեսն և ի հոգի ածին և ասեն, թէ. «Ի՞նչ տեսար»: Եւ ի մէկ ալ
սնդկէն հանեն զպառաւ, և հրամայեաց. թէ. «Սպանեցէ՛ք զայդ շուն պառաւդ»: Եւ
ասաց կաֆայ.

— Այսաւր ես տեսայ զարեւ¹⁰⁹
ի մօրէն¹¹⁰, որ նոր ծագեցաւ.
Երեկ լոյս մթան աշիշս,
իմ ամէն դժարս դուրացաւ.
Այս էր իմ հոգոյս հոգին,
որ ելած էր, այլաւ դարձաւ.
Բայց Յուդայ է այդ պառաւդ,
որ զամէն շար¹¹¹ դա ծնեցաւ:

Դարձաւ¹¹² դէպի ձեմիլան ասաց կաֆայ.

— Թող ես գիտենալ¹¹³ կարի,
թէ¹¹⁴ ո՞վ էր ի հոգ զընգաներ.
Դու լույս, ի լուսին նման,
զղաֆասդ ո՞վ քեզ քողարկեր.
Ասկից ի վեր, թէ մեռնիմ,
չի հոգամ, որ դու ինձ եղեր.

96 B և զտանն քուլֆաթն—ՉԻՔ

97 B աղջիկն իւր—ՉԻՔ

98 B ի մէկ ուղտ էր բարձեր երկու սնդկով փե մէկ... բարձեր

99 Լրացումն ըստ B-ի

100 B փախեան միայն փե փախեալ... միայն

101 B և փայ... սնդուկն էր—ՉԻՔ

102 B բարձեալ փե ի մէջն սնդկից

103 B Եւ առեալ... իւրեանց—ՉԻՔ

104 B հասաւ հեծելն. փե պառահեցան ի վերայ հեծելք

105 B զինչ ունէին փե զինչքն

106 B զառաջին սնդուկն և ելաւ փե զսնդկնին... սնդկէն

107 B անկաւ—ՉԻՔ

108 B ձգեցին փե ցանեցին

109 B զիմ արեւ փե զարեւ

110 B ի մօրէն—ՉԻՔ

111 B շարիք դա ծնաւ փե շար դա ծնեցաւ

112 B Եւ դարձեալ ասաց փե տողի

113 B գիտէի քեզ փե գիտենալ կարի

114 A Թէ քեզ ով (ուղղումն ըստ B-ի)

Բայց այս է Կայեն պառաւդ,
որ կամէր յարեւս հաներ:

Եւ երր զպառան սպաննել երեւտ, ապա զիւր աշխարհ... պատմեց նոցա,
է զօրքն ամենայն առին զՃեմիւրն և զՃաֆարն և ելան, զնացին մեծաւ պա-
տուով յաշխարհս¹¹⁶ իւրեանց: Եւ հայրն Ճաֆարին ի դէմ ելաւ¹¹⁷ և զիւր էած
տարաւ¹¹⁸ առօր փառօր: Եւ Ճաֆարն պատմեց հօրն, զրն զէշ, որ քաշեր էր
և եցոյց զաղշիկն: Եւ հայր[ն] Ճաֆարին խնստ¹¹⁹ ուրախացաւ և զոհացաւ
դաստուծոյ¹²⁰ անդադար փառարանութեամբ: Եւ արարին հարսանիք Արդւ Ճա-
ֆարին¹²¹ և տուին զՃեմիւրն ի կնութիւն նորա: Եւ շատ բաշխ արաւ ազքատաց
և կարօտելոց հայրն¹²² վասն որդոյն, որ ըրարով դարձաւ: Եւ յետ... այնորիկ
հայրն մէն տարի և եւս ապրեցաւ և մեռաւ: Եւ նստաւ յաթոռ թագաւորութեան
ամիր¹²⁴ Ճաֆարն: Խելօք և իմաստութեամբ [վարէր զթագաւորութիւն] ¹²⁵,
ուրախ և մուրատով սինը յօր մահուն իւրոյ:

Անոնք հասան յիւրեանց մուրատին, դուք այլ հասնիք ձեր քրտին մու-
րատին:

НОВОВЫЯВЛЕННЫЙ СРЕДНЕВЕКОВЫЙ СКАЗ

А. А. СИМОНЯН

Резюме

Средневековый сказ «Повесть об Абдл Джафаре и Джамиле» до сих пор был неизвестен широкому кругу специалистов. Нам удалось обнаружить два рукописных экземпляра этого примечательного произведения (рук. № 671 библиотеки Конгрегации Мхитаристов Вены и рук. № 30 Собрании церкви св. Архангелов предместья Константинополя—Балаты), которые и послужили основой для данной публикации памятника. В сказе явственно проявляются многообразные типологические общности с жизнеутверждающими повестями цикла сказок «Тысяча и одна ночь», однако в своем настоящем виде он не указывает на какой-либо конкретный, равноценный арабский прототип. Будучи одним из средневековых арменизированных памятников, сказ имеет явно выраженные элементы христианизации и локализации. Следует особо подчеркнуть наличие в сказе 14-ти неизвестных нам каф, часть которых тематически, в качестве любовных песен, представляется совершенно новым явлением во всем богатом наследии средневековых армянских каф. В ряду четырехсот каф, содержащихся в средневековой армянской прозе, последние выделяются степенью своей независимости от соответствующих текстов и, следовательно, воспринимаются вне текста как самостоятельные анрены.

115 В էմֆարն փե աշխարհ

116 В իւր աշխարհն փե յաշխարհս իւրեանց

117 В եկաւ փե ելաւ

118 В որդուն և զովեց փե տարաւ... փառօր

119 В խլծ փե խնստ

120 В զաստուծո անդադար փե զաստուծոյ... փառարանութեամբ

121 В ամիր Ճաֆարին փե Արդւ Ճաֆարին

122 В հայրն—ՉԻՔ

123 В յետ այնորիկ—ՉԻՔ

124 В Արդւ փե ամիր

125 Լրացումն ըստ В-ի